«ԱԶՐԱՑԻԼ»։ Ս.-Պետերբուրգ. տպ. Սկորոխոդովի 1890 թ. 8-ածալ. 57 երես. տառ № 12, գինն է 5 կոպէկ։

Ոգեորիչ Ազրաիլը լայտնի Մխիթար աւագակապետն է, որ լեռոլ դարձաւ Դաւիթ բէկի համարձներից ամենանշանաւորը, հայոց զօրքերի սպարապետը։ Ղարաբաղում անցեալ դարում հայոց թուրքերի հետ արիւնահեղ կռիւները ծնեցրին մի շարք ուժեղ, հզօր անձնաւորութիւններ, որոնց հետ աւելի լաւ ծանօթացնում է Բաֆֆիի «Դաւիթ—բէգը»։ Նոյն անձնաւորութիւնները միայն անհամեմատ թուլ կերպով դուրս են բերած և այս գրքոյկում, որի մէջ բնութեան երկայն նկարագրութիւնները և հերոսների տեղ տեղ միամիտ խօսակցութիւնները թուլացնում են պատմածի հետաքրքրութիւնը։ Եթէ ժողովրդական ընթերցանութեան համար մի շատ էժանագին հրատարակութիւն չինէր Բաֆֆի «Դաւիթ-բէգից»՝ աւելի նպատակայարմար կը լինէր։

Լ. Ս.

«ՇԱՄԻԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ», Ս.-Պետերբուրգ տպ. Սկորոխոդովի 1880 թ. 8-ածալ, 18 երես, տառ № 12. գինը 2 կոպէկ։

Գրքոյկիս բովանդակութիւնը այս է։

Ռուսները շրջապատել են լեռնական չեչեններին ամեն կողմից։ Գոռող Շամիլը հեռու է նոցանից և Չեչնան կամ պէտք է հնազանդի ռուսներին կամ զրկւի իւր որդկերանցից կատաղի կռւում։ Չեչնայի գլխաւորները մտածում են պատգամաւորներ ուղարկել Դարչո տուլը, իմամ Շամիլի մօտ, որ նա կամ օգնէ զօրքով կամ թոյլ տայ հնազանդւելու գեաուր-ռուսներին։ Բայց ով կը խիզախի հնազանդութեան մասին իմամի մօտ խօսել։ Շամիլը միայն լսում է իւր ջերմ սիրած մօր խորհուրդները. այդ իմանում են պատգամաւորները և միջնորդ գցում նորան։ Շամիլի մայրը լայտնում է իւր որդուն չեչենների միտքը հնազանդւելու ռուսներին։ Տխրում է անվեհեր իմամը և երեք օր փակւում մզկիթում աղօթելու Ալլահին և Մարգարէից խորհուրդ հարցնելու, իսկ ժողովուրդը լաց և վայոցով մոմ ու աղօթքով սպասում է իմամի երևալուն։ Ահա և նա սփրթնած, աչքերն արնկալած բարձրացաւ մզկիթի կտուրը, կանչեց մօրը և դիմեց ժողովրդին, զարմացած լայտնելով որ չեչենները մոռացել են իրանց Ալլահին և Մուհամէդին տւած խօստումը, որովհետև իրանց լանցաւոր սրտերում լղացել են մի լանդուգն միտք՝ հնազանդւել գեաուրներին։

Նրանք չեն ամաչել մինչև անգամ իւր՝ Շամիլի՝ մօտ մարդիկ ուղարկել, ստանալ համաձայնութիւն. և Չեչնայի պատգամաւորները հասկանալով իրանց մտադրութեան ստորութիւնը չեն կանգնել իրանք երևալու իւր առաջ և միջնորդ են գցել մի թոլլ կնոջ՝ իւր մօրը։ Մարդարէն հրամայեց հարիւր հարուած տալ նորան, ով առաջին անգամ լալտնեց չեչենների այդ մտադրութիւնը իմամին և այդ առաջինը, աւաղ, իւր մայրն էր, սակայն արդարութիւնը պահանջում է, որ նա ինքը պէտք է լինի դահիճը իւր սիրելի մօր։ Հինգ հարուածից վետոլ ուշաթափւում է մայրը, զարհուրած Շամիլը ընկնում է մօր ոտքերը։ Ժողովուրդը հուզուած է և լալիս։

Բայց իմամը կրկին ոտքի է կանգնում և լալտնում իւր կամքը՝ ընդունել իւր մէջքի վերայ մնացած հարուածները։ Մերկացնում է իւր մէջքը և հրամայում միւրիդներին հաստ ճիպոտներով տալ իրան 25 հարուած, սպառնալով որ եթէ մէկը համարձակւի խնայել և թոլլ խփել, խենջարը կը կոխի նորա փորը։ Բոլորը ապշած մնացել են։ Ամօթահար չեչենները տարածուած գետնին սպասում են իրանց մահու պատժին... բայց Շամիլը բարձրացնում է նրանց և ասում.

—Գնացէք ձեր ժողովուրդի մօտ ու պատասխանի տեղ պատմեցէք նրան այն ինչ որ այստեղ լսեցիք ու տեսաք։

Մութ է մնում և անհասկանալի մի բան. այդ ինչպէս եղաւ որ «օգնական զօրք ուղարկելու մասին» Շամիլին պատգամաւորները ոչինչ չը լալտնեցին. այն ժամանակ Շամիլը հաւանական է որ կ'ուղարկէր օգնութիւն և հարկ չէրլինի գուցէ հնազանդութեան մասին խօսել և հարուածները ոչ մայրը և ոչ ինքը կը ստանար։

Լ. Ս.

ԴՈԴԷ ԱԼՖՈՆՍ.—«ԲԵՐԼԻՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ»։ Թարգմանութիւն Ս.-Պետերբուրգ տպ. Սկօրօխօդովի. 1880 թ. 8-ծալ, 15 երես. № 12. գինը 2 կոպ.։

Շատ կենդանի գրած մի փոքրիկ հոդեբանական ղրոյց է Ֆրանկո—պրուսական պատերազմից։ Պարիզում մի հայրենասէր ծեր գնդապետ կաթուածահարով հիւանդ պառկած իւր մահճակալում ուշք ու մտքով ապրում է Ֆրանսիական զօրքի պատերազմական շարժումներով։ Նորան շրջապատողները իմանալով որքան վատ հետևանք կ'ունենայ հիւանդի առողջութեան վերայ Ֆրանսիական զօրքի մասին վատ լուրերը, ստիպուած են հնարել և պատմել չեղած յաղթութիւններ։ Պրուսացիք արդէն Պարիզի պարիսպների տակ են, իսկ հայրենասէր գնդապետին շրջա-